ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության ժողովում «05» հուլիսի 2004թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 4 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ N 2

Գրանցված է
ՀՀ արդարադատ. նախարարության կոլեգիայի 23.08.1996 թ. թիվ 27/1-1 որոշմամբ:
Գրանցված է կանոնադրական փոփոխություն ՀՀ արդարադատ. նախար. կոլեգիայի 06.03.1998 թ. թիվ 9/1-11 որոշ.:
Վերագրանցված է
ՀՀ արդարադատության նախարարի 30.12.1999 թ. թիվ 2200 հրամանով:
Գրանցված է
ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
«20» 09 2005թ.
գրանցման համար 211.171.03.296
վկայականի համար 034.06.82955

Պետական ռեգիստրի ղեկավար
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կենտրոն) ինքնաֆինանսավորվող, ինքնակառավարվող գիտավերլուծական հասարակական միավորում է և չի հետապնդում շահույթ ստանալու նպատակ:

1.2. Կենտրոնն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում գրանցման պահից և ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկերում՝ հաշվարկային և այլ հաշիվներ, կլոր կնիք խորհրդանշով՝ կենտրոնում պատկերված կշեռք, իսկ եզրագծի երկայնքով հայերեն և անգլերեն գրված են հետևյալ բառերը. «ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպություն «THE CENTER OF CONSTITUTIONAL LAW OF RA» (պատկերը կցվում է):

Կենտրոնն ունի նաև դրոշմակնիք, տիտղոսաթերթ և տարբերանշան: Իրավունք ունի իր անունից հանդես գալու դատարաններում և այլ կազմակերպություններում:

1.3. Կենտրոնը գործում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, գործող օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.4. Կենտրոնի անվանումն է.

հայերեն՝ «ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպություն,

ռուսերեն՝ «Центр Конституционного права Республики Армения» общественная организация,

անգլերեն՝ «THE CENTER OF CONSTITUTIONAL LAW OF THE REPUBLIC OF ARMENIA» public organization:

1.5. Կենտրոնի իրավաբանական հասցեն է՝

քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա թիվ 10, հեռախոս 58-81-89

1.6. Կենտրոնն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և արտասահմանյան երկրներում, այդ երկրների օրենսդրության համապատասխան:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կենտրոնի գործունեության առարկան և նպատակներն են.

- Հայաստանում իրավական և ժողովրդավարական պետության կայացմանն օժանդակելը.

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, վերջինիս դրույթների համընդհանուր ճանաչողականությանը նպաստելը և այդ ուղղությամբ ակտիվ քարոզչություն ծավալելը.

- Հայաստանում սահմանադրական իրավունքի՝ որպես իրավունքի առանձին ճյուղի, զարգացմանը նպաստելը, այդ նպատակով համաշխարհային փորձի ուսումնասիրումը, համեմատական վերլուծությունների կազմակերպումը, ակտիվ գործնական կապերի հաստատումն այլ երկրների համապատասխան կառույցների հետ.

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող նոր օրենքների և օրենսդրական այլ ակտերի մշակմանը մասնակցելը, իրավական դաշտի հետագա զարգացմանն ու ամրապնդմանը նպաստելը.

- իրավական գիտելիքների տարածման ու քարոզչության կազմակերպումը.

- իրավաբան մասնագետների, ուսանողությանը և քաղաքացիներին սահմանադրական իրավունքին, իրավագիտության ու քաղաքագիտության բնագավառներում ժամանակակից նվաճումներին ծանոթացնելը և վերջիններիս ներդրմանն աջակցելը.

- մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների հիմնահարցի ուսումնասիրումը և դարանց պաշտպանության երաշխիքների ապահովմանը նպաստելը.

- միջազգային հանրությանը Հայաստանի Հանրապետության սահմանադրությանն ու օրենքներին, ինչպես նաև սահմանադրական իրավունքի բնագավառում կատարվող հետազոտություններին ու գիտական նվաճումներին ծանոթացնելը, այդ նպատակով սեմինարների, համաժողովների, կլոր սեղանների և այլ միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը.

- Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինների, պետական և հասարակական կազմակերպությունների, իրավունքի բարձրագույն դպրոցների ու կենտրոնների հետ գործնական կապերի հաստատումը և համագործակցումը.

- սահմանադրական իրավունքի և, մասնավորապես, սահմանադրական վերահսկողության հիմնախնդիրներին նվիրված հանրապետական, տարածաշրջանային և միջազգային գիտաժողովների, սեմինարների, կլոր սեղանների կազմակերպումը.

- հանրապետությունում դատաիրավական համակարգի վերափոխումներին ակտիվորեն աջակցելը.

- սահամադրական իրավունքի վերաբերյալ երիտասարդ մասնագետների գիտական ու հանրամատչելի աշխատությունների հրապարակմանն աջակցելը, նրանց խրախուսումը և օգնելը.

- դպրոցներում սահմանադրական իրավունքի դասավանդման համակարգի կատարելագործմանն աջակցելը, սահմանադրական իրավունքի վերաբերյալ գիտական ու հանրամատչելի տեղեկատվական բանկ-գրադարանի ստեղծումը.

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սահմանադրական իրավունքի առանձին հարցերի վերաբերյալ զանգվածային լրատ-

վության միջոցներով տեղեկատվության հրապարակումը և գիտելիքների տարածումը.

- տարբեր կազմակերպությունների պատվերներով կամ հատկացումներով (դրամաշնորհներով) սահմանադրական իրավունքի հիմնախնդիրներին նվիրված հետազոտությունների կազմակերպումը և արդյունքների ամփոփումը.

- կենտրոնի ուժերով կազմակերպված հետազոտությունների հրապարակումը.

- բարեգործական և հովանավորչական, ինչպես նաև օրենսդրությաբ չարգելված ու սույն կանոնադրությունից բխող այլ գործունեության իրականացումը:

3. ԿԵՆՏՐՈՆԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼԸ, ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Կենտրոնն ունի անհատական և պատվավոր անդամներ:

3.2. Կենտրոնի անդամ կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա իրավունքի, քաղաքագիտության և հումանիտար այլ ոլորտներում հետազոտական աշխատանքներ կատարող գիտնականներ, դասախոսներ, իրավաբաններ, փաստաբաններ, դատավորներ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, օրինաստեղծ գործունեությամբ զբաղվող մասնագետներ, ովքեր ընդունում են կենտրոնի կանոնադրությունը, նրա նպատակներն ու խնդիրները, ցանկանում են մասնակցել նրա գործունեությանը և մուծում են անդամավճար:

3.3. Կենտրոնի անդամ դառնալ ցանկացող անձինք կենտրոնի խորհուրդ պետք է ներկայացնեն գրավոր դիմում՝ մուծելով մուտքի վճար, որի չափը և վճարման կարգը սահմանվում են կենտրոնի խորհրդի կողմից:

3.4. Կենտրոնին անդամակցելու հարցը լուծում է կենտրոնի խորհուրդը:

Կենտրոնին անդամակցելու մասին դիմումի մերժումը գանգատարկման ենթակա չէ:

3.5. Կենտրոնի անդամները մուծում են անդամավճար, որի չափն ու վճարման կարգը սահմանում է կենտրոնի խորհուրդը:

3.6. Կենտրոնի անդամն իրավունք ունի՝

- ընտրելու և ընտրվելու կենտրոնի ղեկավար և այլ մարմիններում.

- կենտրոնի աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնելու դիմումներ, գանգատներ և առաջարկություններ.

- սպառիչ տեղեկատվություն ստանալու կենտրոնի գործունեության մասին.

- ազատ դուրս գալու կենտրոնի անդամակցությունից՝ իր դիմումի համաձայն.

- բողոքարկել ղեկավար մարմինների որոշումները կազմակերպության բարձրագույն մարմնին.

- մասնակցելու կենտրոնի կողմից կազմակերպված բոլոր միջոցառումներին.

- օգտվելու տվյալների բանկի ծառայություններից:

Կենտրոնի անդամը կարող է ունենալ նաև այլ իրավունքներ:

3.7. Կենտրոնի անդամը պարտավոր է՝

- հոգ տանել կենտրոնի հեղինակության բարձրացման համար

- կատարել կենտրոնի կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները.

- աջակցել կենտրոնի անդամակցման համալրմանը.

- մուծել մուտքի վճար և անդամավճար.

- բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները.

- պահպանել կենտրոնի առևտրային և մյուս գաղտնիքները:

3.8. Մուտքավճար և անդամավճար չմուծած անդամի, ինչպես նաև կենտրոնի կանոնադրական պահանջները խախտող կենտրոնի անդամի նկատմամբ կենտրոնի խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ ընդհուպ կենտրոնի անդամությունից հեռացումը:

4. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Կենտրոնի բարձրագույն մարմինը կենտրոնի ժողովն է, որին պատկանում է կենտրոնի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:

4.2. Կենտրոնի հերթական ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ՝ կենտրոնի խորհրդի կամ խորհրդի նախագահի կողմից, կենտրոնի անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով:

Հրավիրողի կողմից սահմանվում է նաև ժողովի անցկացման կարգն ու ժամկետները:

Կենտրոնի անդամների արտահերթ ժողով հրավիրվում է նախագահի կողմից նրա նախաձեռնությամբ կամ կենտրոնի անդամների առնվազն մեկ երրորդի կամ վերահսկիչ հանձնաժողովի պատճառաբանված պահանջով:

4.3. Կենտրոնի ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

ա) կենտրոնի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարելը.

բ) կենտրոնի խորհրդի անդամների ընտրումը և ետկանչումը.

գ) վերահսկիչ հանձնաժողովի անդամների ընտրումը և ետկանչումը.

դ) կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը.

ե) կենտրոնի լուծարումն ու կազմակերպումը:

Կենտրոնի ժողովի բացառիկ իրավասությունների հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են եթե կողմ է քվեարկել կենտրոնի

բոլոր անդամների թվի կեսից ավելին բաց քվեարկությամբ: Մնացած հարցերով որոշումներն ընդունվում են ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.4. Կենտրոնի ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե դրան մասնակցում է կենտրոնի բոլոր անդամների կեսից ավելին:

4.5. Կենտրոնի կառավարման մարմինը կենտրոնի խորհուրդն է, որն ընտրվում է 2 տարի ժամկետով և իր նիստերը հրավիրում է տարեկան առնվազն երկու անգամ:

4.6. Խորհուրդը կազմված է 19 անդամներից: Խորհրդի անդամ կարող են լինել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների սահմանադրական իրավունքի ճանաչված մասնագետներ, իրավագետներ, հասարակագետներ, պետական և հասարակական գործիչ-ներ, դատաիրավական բնագավառի աշխատողներ: Խորհրդի կազմում օտարերկրյա քաղաքացիների թիվն անդամների ընդհանուր թվի մեկ երրորդից ավելի լինել չի կարող: Խորհուրդը կարող է ընտրել նաև խորհրդի պատվավոր անդամներ:

4.7. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե մասնակցում են անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը: Խորհրդի նիստերում որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ խորհրդի նախագահին եր կանչելու և կենտրոնի լուծարման վերաբերյալ առաջարկության:

4.8. Խորհրդի կազմում անդամները գործում են իրավահավասա-ության սկզբունքով:

Անդամներից յուրաքանչյուրն ունի խորհրդի քննարկմանը հարց առաջադրելու իրավունք:

4.9. Խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են խորհրդի անդամ-ների առնվազն մեկ երրորդի պահանջով, ինչպես նաև խորհրդի նախաձեռնությամբ:

4.10. Խորհուրդը՝

- հաստատում է խորհրդի գործունեության աշխատանքային ընթացիկ և հեռանկարային պլանները.

- լսում է կենտրոնի գործադիր տնօրենի հաշվետվությունը.

- որոշում է ընդունում խորհրդի անդամության, ինչպես նաև պատվավոր անդամության հարցերի վերաբերյալ.

- իր կազմից ընտրում է խորհրդի նախագահ՝ 2 տարի ժամկետով, որը վաղաժամկետ կարող է եր կանչվել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով.

- նշանակում և ազատում է կենտրոնի գործադիր տնօրենին.

- առաջարկություններ է ներկայացնում կենտրոնի ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի լուծման համար.

- կենտրոնի անդամների նկատմամբ կիառում է խարխուսանքներ և տույժի միջոցներ

- վարում է կենտրոնի ընթացիկ գործունեությունը ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում.

- սահմանում է կենտրոնի անդամների կողմից անդամավճարների մուծման կարգը, չափերը և ձևերը.

- ստեղծում, վերակազմակերպում ու լուծարում է կենտրոնի առանձնացված ստորաբաժանումները, կառուցվածքային միավորները, տնտեսական ընկերություններն ու հիմնարկները, ինչպես նաև հաստատում նրանց կանոնադրությունները.

- ընդունում է կենտրոնի և նրա գործադիր մարմնի ընթացիկ գործունեության վերաբերյալ այլ որոշումներ.

- իրավունք ունի քննելու և լուծելու ցանկացած հարց, բացառությամբ կենտրոնի ժողովի բացառիկ իրավասությանը վերապահվածների:

4.11. Խորհրդի նախագահը՝

- ղեկավարում է կենտրոնի ընթացիկ գործունեությունը.

- հաստատում է կենտրոնի գործադիր մարմնի կանոնադրությունը, հաստիքացուցակը, գործադիր տնօրենի ներկայացմամբ նշանակում է գործադիր տնօրենի տեղակալ.

- հրավիրում է խորհրդի նիստեր, այդ թվում՝ արտահերթ, և նախագահում դրանք.

- ստորագրում է և հրապարակում խորհրդի որոշումներն ու վերահսկում դրանց կենսագործումը.

- ներկայացնում է կենտրոնը այլ կազմակերպությունների և պաշտոնատար անձանց հետ հարաբերություններում.

- կատարում է խորհրդի որոշումներով իր վրա դրված այլ պարտականություններ:

4.13. Կենտրոնի գործադիր տնօրենը՝

- ղեկավարում է կենտրոնի գործադիր մարմնի աշխատանքը.

- իրականացնում է կենտրոնի խորհրդի որոշումները և խորհրդի նախագահի հանձնարարությունները.

- աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում գործադիր մարմնի աշխատակիցներին՝ համաձայնեցնելով խորհրդի նախագահի հետ.

- խորհրդի նախագահի գիտությամբ վարում է կենտրոնի ֆինանսական և տնտեսական գործերը, պահպանում է կենտրոնի կնիքը, դրոշմակնիքը.

- առանց լիազորագրի կենտրոնը ներկայացնում է այլ կազմակեր-պություններում:

Կենրոնի գործադիր տնօրենի բացակայության դեպքում նրան փոխարինում է գործադիր տնօրենի տեղակալը:

4.14. Վերահսկիչ հանձնաժողովը կազմված է 5 անդամներից, ընտրվում է 2 տարի ժամկետով, վերահսկում է կենտրոնի ժողովի և խորհրդի որոշումների կատարումը, միջոցների օգտագործումը, ստուգում է կետրոնի փաստաթղթերը, այդ թվում՝ հաշվեկշիռը: Վերահսկիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ:

4.15. Վերահսկիչ հանձնաժողովը կարող է ցանկացած տվյալ և հաշվետվություն պահանջել կենտրոնի ղեկավարից և մյուս աշխատողներից:

4.16. Վերահսկիչ հանձնաժողովը պարտավոր է իր հաշվետվությունը ներկայացնել կենտրոնի ժողովին՝ կենտրոնի գործունեության արդյունքների, հաշվեկշռի, միջոցների օգտագործման և այլ ամփոփ տվյալների մասին: Վերահսկիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել կենտրոնի խորհրդի անդամները և նախագահը:

4.17. Վերահսկիչ հանձնաժողովը իրավասու է որոշումներ ընդունել, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

5. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5.1. Կենտրոնը կարող է ունենալ շենք, շինություններ, տրանսպորտային միջոցներ, բաժնետոմսեր, այլ արժեթղթեր և օրենսդրությամբ չարգելված այլ գույք, հիմնադրել մասնաճյուղեր, տնտեսական ընկերություններ և հիմնարկներ: Կենտրոնի գույքը հանդիսանում է կենտրոնի սեփականությունը:

5.2. Կենտրոնի միջոցները կարող են գոյանալ՝

- հիմարկների, ձեռնարկությունների, կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից), անհատ անձանց (այդ թվում՝ օտարերկրյա) նվիրատվություններից.

- կենտրոնի կատարած հետազոտությունների և հրապարակումների համար ստացված միջոցներից.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

5.3. Կենտրոնի գույքը և միջոցներն օգտագործվում են բացառապես կանոնադրական նպատակների իրագործման համար:

5.4. Կենտրոնի անդամների կողմից կենտրոնին հանձնված գույքը և միջոցները վերջինիս սեփականությունն են: Այդ գույքի և միջոցների նկատմամբ անդամներն իրավունքներ չեն պահպանում:

5.5. Կենտրոնի անդամները պատասխանատու չեն կենտրոնի պարտավորությունների, իսկ կենտրոնը՝ մասնակիցների պարտավորությունների համար:

6. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

6.1. Կենտրոնի գործունեությունը կարող է դադարել նրա լուծարմամբ կամ վերակազմակերպմամբ՝ կենտրոնի ժողովի որոշմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

6.2. Կենտրոնի լուծարման դեպքում խորհրդի կողմից ստեղծվում է լուծարային հանձնաժողով, որը կազմում է կենտրոնի վերջնահաշվարկը և իրականացնում լուծարման գործընթացը:

6.3. Կենտրոնի լուծարումից հետո նրա գույքը և միջոցներն օգտագործվում են սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրագործման համար, իսկ եթե անհնարին է, փոխանցվում է պետական բյուջե:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԼՈՐ ԿՆԻՔԻ ՊԱՏԿԵՐԸ

ՀՀ ՍԻԿ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ